

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 17/1

5 մայիսի 2015 թ.

Քննարկվեց Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի 10.04.2015 թ-ի թիվ Ե/2015.10.04/219 վարչական բողոքը ՀՀ ֆինանսների նախարարի անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և կազմակերպությանը 17.03.2015 թ-ի տեղեկատվության հարցման 2-րդ կետով և 3-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջվող տեղեկատվությունները, ինչպես նաև 3-րդ կետում նշված փաստաթղթերի օրինակելի ձևերը տրամադրելու վերաբերյալ:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի բողոքում բերված փաստարկները.

1. Փաստական հանգամանքները.

1.1. 2015 թ-ի մարտի 17-ին Կազմակերպության կողմից Մուշեղ Գևորգյանի իրավունքների պաշտպանության նպատակով տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն, որով խնդրվել է տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին՝

1. 2015թ. հունվարի 22-ին Մուշեղ Գևորգյանի կողմից (2011թ. թողարկված LEXUS LX 570 մակնիշի տրանսպորտային միջոցի) մաքսազերծման համար վճարված.

- 6.707.971 ՀՀ դրամը ինչ կարգով է հաշվարկվել,

- 6.707.971 ՀՀ դրամը ինչ հարկատեսակներ է իր մեջ ներառում,

- 6.707.971 ՀՀ դրամը հաշվարկելիս, որ իրավական ակտով (կամ ակտերով) է ղեկավարվել վարչական մարմինը:

2. ՀՀ և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում վկայակոչված՝ մաքսային մարմինների տեղեկատվական բազայի կրկնօրինակը,

3. Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ՀՀ ներմուծված տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումներ իրականացնելու համար,

- ինչ փաստաթղթեր են ենթակա ներկայացման,

- ինչ հայտարարագրեր պետք է ներկայացվի (առկայության դեպքում տրամադրել փաստաթղթի օրինակելի ձևը):

1.2. 2015 թ-ի մարտի 26-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պատասխան գրությամբ հայտնվել է, որ «22.01.2015թ. թիվ F 1047 մաքսային հայտարարագրով ձևակերպված LEXUS LX 570 մակնիշի ավտոմեքենայի մաքսային արժեքը որոշման համաձայնագրի 10-րդ հոդվածի պահանջների համաձայն այն կազմել է 20.961.160 դրամ: Վերոհիշյալ ավտոմեքենայի համար 6.716.071 դրամ մաքսային վճարումները ներառում են 10 % մաքսատուրք՝ 2.096.116 դրամ, 20% ԱԱՀ՝ 4611.455 և 6.500 դրամ մաքսավճար:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ավտոմեքենաների մաքսային մարմնի բազայում առկա արժեքների ցանկն ամփոփ տարբերակով (կոնկրետ պահի դրությամբ առկա փոփոխություններով հանդերձ) հրապարակվում և ներկայացվում է ՀՀ ՖՆ ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը՝ դրա համար հատուկ հատկացված վայրում:

ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող տրանսպորտային միջոցների ձևակերպման համար անհրաժեշտ է ՀՀ ՖՆ հարկային մարմին ներկայացնել տրանսպորտային միջոցն ուղեկցող փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցի ձեռքբերման հաշիվ ապրանքագիրը, ՌԴ մաքսային սահմանային մարմնի կողմից կազմված տարանցման հայտարարագիրը»:

2. Իրավական հիմնավորումները և պահանջը.

2.1. 17.03.2015թ. Կազմակերպության կողմից ներկայացված տեղեկատվության հարցման 3-րդ կետի 1-ին ենթակետով խնդրվել է տրամադրել նաև ՀՀ և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում վկայակոչված մաքսային մարմինների տեղեկատվական բազայի կրկնօրինակը, որը սակայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխան գրությամբ չի տրամադրվել, միայն նշվել է, որ «(...) մաքսային մարմնի բազայում առկա արժեքների ցանկն հրապարակվում և ներկայացվում է ՀՀ ՖՆ ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը դրա համար հատուկ հատկացված վայրում (...)»:

Կազմակերպության կողմից ներկայացված հարցմամբ նաև խնդրվել է առկայության դեպքում տրամադրել ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը, սակայն պատասխան գրությունում այդ հարցին որևէ անդրադարձ չի կատարվել:

2.2 ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված վերը նշված իրավունքների իրականացումն ապահովվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով, որի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր տեղեկությունը /կամ/ դա ստանալու նպատակով օրենքով սահմանված նկարագրով դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկատվությունը»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիքն ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից...»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն»:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ «...տեղեկություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկություն տրամադրելը, ինչպես նաև տեղեկատվության ազատության մասին օրենքով սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն»:

Վերը նշված օրենսդրական դրույթների և ՀՀ ֆինանսների նախարարի կողմից տրամադրված տեղեկատվության վերլուծությունից հետևում է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը չտրամադրելով կազմակերպության կողմից պահանջվող ամբողջական տեղեկատվությունը խախտել է Կազմակերպության ՀՀ Սահմանադրությամբ և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Վերոգրյալ հոդվածների ինչպես տառացի, այնպես էլ լեզույ մեկնաբանման դեպքում կստացվի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք կարող են ղեկավարվել միմիայն օրենքներով և պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը, իսկ գործողությունները (կամ անգործությունը), որոնք օրենքով սահմանված կարգով չեն կատարվել իրավաչափ չեն:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ, 70-րդ, 72-րդ հոդվածների և 76-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները բողոքաբերը խնդրում է ՀՀ ֆինանսների նախարարի անգործությունը ճանաչել ոչ իրավաչափ և հանձնարարել տրամադրել Կազմակերպության 17.03.2015թ. տեղեկատվության հարցման 2-րդ կետով և 3-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջվող տեղեկատվությունները, ինչպես նաև 3-րդ կետում նշված փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև կազմակերպություն) 17.03.2015 թ-ի թիվ Ե/2015.17.03/180 գրությամբ հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն, որով խնդրել է տրամադրել համապատասխան տեղեկատվություն:

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի (այլ ոչ թե նախարարի) 26.03.2015 թ-ի թիվ 02/8-1/7353-15 գրությամբ կազմակերպությանը տրամադրվել է վերջինիս կողմից պահանջված տեղեկատվությունը: Սակայն կազմակերպությունը գտնում է, որ իր

կողմից պահանջված տեղեկատվությունը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ամբողջությամբ չի տրամադրվել: Մասնավորապես, կազմակերպությունը գտնում է, որ 17.03.2015 թ-ի թիվ Ե/2015.17.03/180 գրության 2-րդ կետով և 3-րդ կետի 2-րդ ենթակետով պահանջված տեղեկատվությունները, ինչպես նաև և 3-րդ կետում նշված փաստաթղթերի օրինակելի ձևերը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից չեն տրամադրվել:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

17.03.2015 թ-ի թիվ Ե/2015.17.03/180 գրության 2-րդ կետով կազմակերպությունը խնդրել է տրամադրել ՀՀ և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման և վճարման առանձնահատկությունների մասին օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում վկայակոչված՝ մաքսային մարմինների տեղեկատվական բազայի կրկնօրինակը:

Կազմակերպության 17.03.2015 թ-ի թիվ Ե/2015.17.03/180 գրության 2-րդ կետով պահանջված տեղեկատվության վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 26.03.2015 թ-ի թիվ 02/8-1/7353-15 գրությամբ հայտնվել է, որ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ավտոմեքենաների մաքսային մարմնի բազայում առկա արժեքների ցանկն ամփոփ տարբերակով (կոնկրետ պահի դրությամբ առկա փոփոխություններով հանդերձ) հրապարակվում և ներկայացվում է ՀՀ ՖՆ ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը՝ դրա համար հատուկ հատկացված վայրում:

Նման պատասխան տալու համար հիմք է հանդիսացել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթները, որի համաձայն. «2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.»:

Հանձնաժողովի համոզմամբ կազմակերպության 17.03.2015 թ-ի թիվ Ե/2015.17.03/180 գրության 2-րդ կետով հայցված տեղեկությունն իր բնույթով հանդիսանում է հրապարակված տեղեկություն և ՀՀ ֆինանսների նախարարությունն իր պատասխան գրությունում նշել է տվյալ հրապարակման միջոցի և վայրի մասին: Այսինքն, Կազմակերպության 17.03.2015 թ-ի թիվ Ե/2015.17.03/180 գրության 2-րդ կետով կատարված հարցադրմանը հստակ պատասխանվել է:

17.03.2015 թ-ի թիվ Ե/2015.17.03/180 գրության 3-րդ կետով կազմակերպությունը խնդրել է հայտնել, թե Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ՀՀ ներմուծված տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումներ իրականացնելու համար,

- ինչ փաստաթղթեր են ենթակա ներկայացման,

- ինչ հայտարարագրեր պետք է ներկայացվի (առկայության դեպքում տրամադրել փաստաթղթի օրինակելի ձևը):

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 26.03.2015 թ-ի թիվ 02/8-1/7353-15 գրությամբ կազմակերպությանը հայտնվել է, որ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող տրանսպորտային միջոցների ձևակերպման համար անհրաժեշտ է ՀՀ ՖՆ հարկային մարմին ներկայացնել տրանսպորտային միջոցն ուղեկցող փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցի ձեռքբերման հաշիվ- ապրանքագիրը, ՌԴ մաքսային սահմանային մարմնի կողմից կազմված տարանցման հայտարարագիրը:

Այսինքն, Կազմակերպության 17.03.2015 թ-ի թիվ Ե/2015.17.03/180 գրության 3-րդ կետով հայցված տեղեկությունը ևս տրամադրվել է:

Ինչ վերաբերվում է վերը հիշատակված փաստաթղթերի օրինակելի ձևերի տրամադրմանը, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ այդ ձևերը հաստատված են համապատասխան նորմատիվ իրավական ակտերով, որոնք համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ենթակա են պարտադիր հրապարակման: Մասնավորապես, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական կայքէջում (arlis.am) հրապարակված են ՀՀ և ԵՏՄ իրավական ակտերը, որոնցով հաստատված են համապատասխան ձևերը: Հետևապես, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համատեքստում նման ակտերի տրամադրումը չի կարող տեղեկատվության ստացման վերաբերյալ հարցման առարկա լինել:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ կազմակերպության 17.03.2015 թ-ի թիվ Ե/2015.17.03/180 գրությամբ պահանջված տեղեկատվությունը ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 26.03.2015 թ-ի թիվ 02/8-1/7353-15 գրությամբ ամբողջությամբ տրամադրվել է: Հետևապես ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 26.03.2015 թ-ի թիվ 02/8-1/7353-15 գրությունը հիմնավոր է և բխում է ՀՀ օրենսդրության պահանջներից:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի 10.04.2015 թ-ի թիվ Ե/2015.10.04/219 վարչական բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ